ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 25-ին, չորեքշաբթի օրը, որպես տուրիստներ, Մայր Աթոռ ժամանեցին բրիտանական և օտար Ս. Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչներ կանոնիկոս Ռ. Վ. Ֆ. Վուտտոնը և դոկտ. Վիլլըմ Դ. Ռիբբրնը, որոնք Մայր տաճարում իրենց աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում ընդունվեցին Հայոց Հայրապետի կողմից:

Ժամը 16-ին Վեհարանում, ի պատիվ հյուրերի, տրվում է բարի գալստյան ճաշկերույթ, որին մասնակցում են նաև տ. Սերովբե, տ. Հուսիկ սրբազանները, տ. Շնորհք, տ. Նարեկ վարդապետները, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Այնուհետև, ժամը 18-ին, Վեհարանում Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում զրույց Ս. Գրոց միացյալ ընկերությունների գործունեության և ապագա ծրագրերի շուրջ:

Փետրվարի 26-ին և 27-ին հարգարժան հյուրերը այցելում են ս. Գեղարդ, Գառնի, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան և ապա՝ մայրաքաղաքի տեսարժան վայրերը:

Փետրվարի 27-ին, ուրբաթ օրը, ժամը 13-ին, Վեհարանում Ս. Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչներ կանոնիկոս Ռ. Վուտտոնը և դոկտ. Վիլլըմ Դ. Ռիբբրնը մասնավոր տեսակցություն են ունենում տ. Հայկազուն արքեպիսկոպոսի և վերջերս Մայր Աթոռում չորս Ավետարանների և Գործք առաքելոցի արևելահայերենի նոր թարգմանությունը կատարած Ա. Հատիտյանի, Պ. Շահբազյանի և Ս. Անթոսյանի հետ՝ ծանոթանալու համար կատարված թարգմանության մեթոդին և սկզբունքներին:

Զրույցի ընթացքում տեղի է ունենում ներկաների միջև մտքերի աշխույժ և հետաքրքրքրական փոխանակություն, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Ս. Գրոց միացյալ ընկերությունների կենտրոնի համագործակցության և Աստվածաշնչի արևելահայերեն և արևմտահայերեն նոր թարգմանությունների և հրատարակությունների մասին:

Ժամը 17-ին հարգարժան հյուրերը այցելում են հոգևոր ճեմարան, ուր տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը անգլերեն լեզվով իր ուղերձում ողջունում է Ս. Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչ-

ներին, հաջողություն մաղթելով նրանց գործունեությանն ու առաքելությանը:

Հոգևոր ճեմարանի սաները, ի պատիվ հյուրերի, կատարում են հայերեն և անգլերեն լեզուներով շարականներ և հոգևոր երգեր:

Վերջում կանոնիկոս Վուտտոնը և դոկտ. Ռիբբրնը խոսք առնելով ջերմ շնորհակալություն են հայտնում նախ Ամենայն Հայոց Հայրապետին՝ բացառիկ և ջերմ ընդունելության և հյուրասիրության, ապա հոգևոր ճեմարանի հարկի տակ այս հանդիպման համար դասախոսական կազմի և ուսանողության հետ:

Այնուհետև հարգարժան երկու հյուրերը ուսանողությանը խոսում են իրենց գործունեության և դժվարին, պատասխանատու, բայց և շնորհակալ աշխատանքների մասին:

Փետրվարի 28-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Ս. Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչները հրաժեշտ են առնում Մայր Աթոռից և Հայոց Հայրապետից երախտագետ զգացումներով և անմոռաց տպավորություններով ու վերադառնում իրենց պաշտոնատեղին: